

ԿԱՐԾԻՔ

ԱՇԽԵՆ ԴԱՎԹԻ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆԻ «ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ թեմայով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գյուրջինյան Աշխեն Դավթի ատենախոսությունը նվիրված է ֆրանսերենի մասնագիտական դասընթացում դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգի մշակմանն ու գիտական հիմնավորմանը:

Հետազոտության թեման խիստ արդիական է և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Ժամանակակից լեզվակրթության հիմնական նպատակը ոչ միայն լեզվական գիտելիքների փոխանցումն է, այլև հաղորդակցական, սոցիոմշակութային և միջմշակութային կարողունակությունների ձևավորումը: Այդ համատեքստում դարձվածային միավորները բացառիկ դեր ունեն, քանի որ դրանք արտացոլում են ժողովրդի աշխարհընկալումը, մշակույթը, ավանդույթները և լեզվամտածողությունը:

Հեղինակը փորձել է հիմնավորել և մշակել հաղորդակցական, ճանաչողական և միջմշակութային մոտեցումների վրա հիմնված ուսուցման մոդել:

Ֆրանսերեն դարձվածային միավորները լեզվի բառապաշարի անբաժանելի և գործառութային առումով կարևոր բաղադրիչ են: Դրանց իմացությունն ու նպատակային կիրառումը էապես նպաստում են ուսանողների բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը, ինչպես նաև հաղորդակցական կարողունակության ձևավորմանը: Լիարժեք օտարալեզու հաղորդակցություն հնարավոր չէ ապահովել առանց դարձվածային միավորների ձևաբանական, շարահյուսական, ոճական, խոսութային և գործառական առանձնահատկությունների յուրացման:

Այս համատեքստում առաջնահերթ խնդիր է դառնում դարձվածային միավորների ուսուցման մեթոդների և ռազմավարությունների ընտրությունը՝ հաղորդակցական-ճանաչողական մոտեցման հիման վրա:

Ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցումը բուխերում հաճախ կրում է ոչ համակարգված բնույթ և պայմանավորված է դասավանդողի անհատական մոտեցմամբ, ուստի դրանց նպատակային ընտրությունն ու մեթոդական կազմակերպումը դառնում են հետազոտության հիմնական խնդիրներից: Հատուկ ուշադրության են արժանի նաև

դարձվածքների ոճական առանձնահատկությունները, որոնք հաճախ բարդացնում են դրանց ուսուցման և թարգմանության գործընթացը և պահանջում հետագա մեթոդական ուսումնասիրություն:

Ատենախոսը հստակորեն հատկորոշում է նաև հետազոտության գիտական նորույթը:

Աշխատության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ մշակվել և հիմնավորվել է ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման ամբողջական մեթոդական համակարգ, որը հիմնված է հաղորդակցական, ճանաչողական և վերձանաչողական մոտեցումների համադրման վրա:

Ատենախոսի նպատակն է եղել հիմնավորել և մշակել ֆրանսերենի դարձվածային միավորների ընտրության և ուսուցման մեթոդական համակարգը մասնագիտական դասընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետ ընկալումը, յուրացումը և կիրառումը խոսքում:

Հիշյալ նպատակին ատենախոսը հասել է՝ լուծելով հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ֆրանսերենի և հայերենի բառապաշարին, մասնավորապես դարձվածային պաշարին վերաբերող գուգադրական-տիպաբանական գրականությունը,
- համակարգել դարձվածային միավորների ընտրության և ուսուցման ռազմավարությունները,
- բացահայտել դարձվածային միավորների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները՝ հաշվի առնելով հայերեն համարժեքները,
- մշակել ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման մեթոդական համակարգ՝ հաշվի առնելով մասնագիտական դասընթացի առանձնահատկությունները:

Ատենախոսությունը, քննարկվող խնդիրներով պայմանավորված, բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը ներառում է 11 աղյուսակ, 14 գծապատկեր, 9 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը 136 համակարգչային էջ է:

Ատենախոսության ներածությունում (էջ 3–9) հեղինակը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, ձևակերպում նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան և վարկածը: Գիտական ապարատը կառուցված է հստակ, տրամաբանական և հետևողական կերպով:

Առաջին գլխում՝ (էջ 10–61) «Դարձվածային միավորների ուսուցման առանձնահատկությունները ֆրանսերենի մասնագիտական դասընթացում», ուսումնասիրվում

են ուսուցման տեսական և մեթոդական հիմքերը, դրանց ընտրության սկզբունքները, լեզվամշակութային և հաղորդակցական առանձնահատկությունները, ինչպես նաև ուսուցման ռազմավարությունները:

Կատարվել է դարձվածային միավորների ընտրության և ուսուցման տեսական հիմքերի ուսումնասիրություն: Հեղինակը կատարում է հայ և արտասահմանյան մասնագիտական գրականության խորքային վերլուծություն, ներկայացնում դարձվածային միավորների ընտրության չափանիշները և սկզբունքները, հիմնավորում դրանց հաղորդակցական, մշակութաբանական և ճանաչողական արժեքը:

Հատկապես արժեքավոր է ֆրանսերեն և հայերեն դարձվածային միավորների համադրական քննությունը, ինչպես նաև միջմշակութային բաղադրիչի ուսումնասիրությունը, որոնք նպաստում են սովորողների միջմշակութային կարողունակության ձևավորմանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման առավել նպատակահարմար մոդելը և դրա արդյունավետության հիմնավորումը փորձարարական ուսուցման միջոցով», ունի առանձնահատուկ գիտամեթոդական և գործնական արժեք: Այս գլխում հեղինակը տեսական դրույթներից անցում է կատարում դրանց գործնական կիրառությանը՝ ներկայացնելով ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման սեփական մեթոդական համակարգը, դրա կառուցվածքային բաղադրիչները, ուսուցման ռազմավարությունները և արդյունավետության ստուգման մեխանիզմները:

Գլխի կարևոր ձեռքբերումներից է ֆրանսերենի խոսակցական ոճի դարձվածային միավորների ուսուցման ռազմավարության մշակումը: Հեղինակը հիմնավորում է, որ դարձվածային միավորների ուսուցումը պետք է իրականացվի ոչ միայն լեզվական, այլև մշակութաբանական և ճանաչողական համատեքստում, քանի որ դրանք արտացոլում են լեզվակիր ժողովրդի աշխարհընկալումը, արժեքային համակարգը և ազգային մտածողությունը: Այս առումով կարևորվում է լեզվի և մշակույթի փոխկապակցվածության սկզբունքը, ինչպես նաև սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Հեղինակի կողմից առաջարկված մեթոդական համակարգում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դարձվածային միավորների ընտրության չափանիշներին, դրանց փուլային ներմուծմանը և ուսուցման ընթացքում հաղորդակցական, ճանաչողական և միջմշակութային բաղադրիչների համադրմանը: Ուսուցման գործընթացում լայնորեն կիրառվում են համեմատական վերլուծության, մեկնաբանման, համատեքստային կիրառման, թարգմանական և ստեղծագործական առաջադրանքների մեթոդները, որոնք նպաստում են

դարձվածքների ոչ միայն ճանաչմանը, այլև ակտիվ կիրառմանը խոսքային գործունեության տարբեր տեսակներում:

Հետազոտության կարևորագույն դրույթներից է բազմալեզվության գործոնի հաշվառումը: Հեղինակը ցույց է տալիս, որ հայերեն, ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուների դարձվածային միավորների համադրական ուսումնասիրությունը նպաստում է սովորողների լեզվամտածողության զարգացմանը, միջլեզվական կապերի բացահայտմանը և դարձվածքների առավել գիտակցված յուրացմանը: Առանձնակի արժեք ունի նաև աստվածաշնչյան, դիցաբանական և մշակութային ծագում ունեցող դարձվածային միավորների ներմուծման մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս ընդլայնել ուսանողների լեզվամշակութային գիտելիքները և զարգացնել նրանց միջմշակութային կարողունակությունը:

Երկրորդ գլխում հիմնավորվում է նաև դարձվածային միավորների ուսուցման մեջ հաղորդակցական գործունեության բոլոր տեսակների՝ խոսելու, գրելու, ընթերցելու և ունկնդրելու համակողմանի զարգացման անհրաժեշտությունը: Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ դարձվածային միավորների արդյունավետ յուրացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանք գործածվում են բնական հաղորդակցական իրավիճակներում և ներառվում են ուսանողների ակտիվ բառապաշարի մեջ:

Գլխի առավել արժեքավոր հատվածը փորձարարական ուսուցման նկարագրությունն ու արդյունքների վերլուծությունն է: Փորձարարական աշխատանքը կազմակերպվել է հստակ մեթոդաբանությամբ և նպատակաուղղված է եղել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետության ստուգմանը: Ստացված արդյունքները վկայում են, որ մշակված մոդելի կիրառումը նպաստում է ուսանողների դարձվածաբանական, հաղորդակցական և միջմշակութային կարողունակությունների էական զարգացմանը, բարձրացնում է նրանց հետաքրքրությունը ուսումնասիրվող լեզվի նկատմամբ և ապահովում դարձվածային միավորների առավել կայուն յուրացում:

Ընդհանուր առմամբ, ատենախոսության երկրորդ գլուխը առանձնանում է իր գործնական ուղղվածությամբ, մեթոդական հիմնավորվածությամբ և կիրառական նշանակությամբ: Այն ոչ միայն ներկայացնում է ֆրանսերենի դարձվածային միավորների ուսուցման արդյունավետ մոդել, այլև առաջարկում է կոնկրետ մեթոդական լուծումներ, որոնք կարող են հաջողությամբ կիրառվել բարձրագույն կրթության համակարգում և օտար լեզուների դասավանդման ժամանակակից պրակտիկայում:

:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացմանը նպաստող նոր մոտեցումների մշակմամբ, իսկ գործնական նշանակությունը՝ դրա արդյունքների կիրառելիությամբ բուհական կրթության, ուսումնական ծրագրերի և մեթոդական ձեռնարկների մշակման ոլորտներում:

Հեղինակը ցուցաբերել է գիտական վերլուծության բարձր մակարդակ, կարողացել է համակարգել մեծածավալ գիտական նյութ, կատարել հիմնավորված եզրահանգումներ և առաջարկել գործնական լուծումներ:

Դրական գնահատելով Աշխեն Գյուրջինյանի ատենախոսությունը՝ այնուամենայնիվ, կցանկանայինք մի քանի դիտարկում անել:

1. Աշխատության մեջ օգտագործվում են «դարձվածային միավոր», «դարձվածք», «դարձվածային նվազագույն», «կայուն բառակապակցություն» հասկացությունները, սակայն դրանց սահմանազատումը միշտ չէ, որ հստակ է: Որոշ դեպքերում դրանք կիրառվում են որպես համարժեք եզրույթներ, ինչը կարող է առաջացնել տեսական անհստակություններ:
2. Գրականության վերլուծության մեջ լայնորեն ներկայացված են դասական լեզվաբանական և մեթոդական աշխատանքներ, սակայն սահմանափակ է վերջին տարիների միջազգային հետազոտությունների կիրառումը՝
3. Թեև հեղինակը ներկայացնում է դարձվածքների ընտրության մի շարք չափանիշներ՝ հաճախականություն, հադորդակցական արժեք, թեմատիկություն, մշակութային նշանակություն և այլն, սակայն պարզ չէ՝ դրանցից որոնք են առաջնային, ինչպիսի հարաբերակցության մեջ են դրանք, ինչպես են լուծվում չափանիշների միջև հնարավոր հակասությունները, ինչ սկզբունքով է ձևավորվել առաջարկվող դարձվածային նվազագույնը:
4. Աշխատության մեջ գրեթե չի քննարկվում դարձվածային նյութի բաշխումը լեզվական տարբեր մակարդակների միջև: Չի հստակեցվում՝ որ դարձվածքները նպատակահարմար է ուսուցանել A2, B1 կամ B2 մակարդակներում, ինչպես պետք է աստիճանաբար բարդացվի նյութը, ինչ չափանիշներով է որոշվում ուսանողի պատրաստվածությունը ավելի բարդ դարձվածքների յուրացման համար:

Այդուհանդերձ, նշված դիտողությունները չեն ստվերում աշխատանքի կարևորությունն ու արժեքը: Դրանք պայմանավորված են աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ասվածը հիմք է տալիս հավաստելու, որ Գյուրջինյան Աշխեն Դավթի ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, որը լիովին բավարարում է ՀՀ ԲԿԳԿ կողմից գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆրանսերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Բ.Գ.Թ., մ.գ.դ., պրոֆ.պ/կ Դալյան Ն. Ե.



Պրոֆ.պ/կ Ն.Ե. Դալյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտքարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ Հ.Գ. Թադևոսյան



8.06.2026